


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ  
 Ե. ՓՈՐՈՍԵԱՆ  
 ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ  
 ՊԵՏԻ Ե ՈՒՂՂՆԻ ԱՌ  
 Խմբագր. ԱՐՇԱՆՈՅՍ ԼՐԱԳՐԻ  
 ԳԱԶԻՐԷ (Հասպոպոլիտ)



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան, ողջ դահլիճ. 60  
 Վեցամսեայ » 35  
 ՕՏԱՐ ԵՐԳԻՆԵՐ  
 Տարեկան Ֆրանկ 20  
 Վեցամսեայ » 12  
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ ԿԱՆԵԿ Ե  
 ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ՓԱՆՊԸ  
 Խմբագրութեան վրայ:  
 Խմբագրութեան ուղղուած  
 գրութիւնք եւ չեն տրուիր:

Rédaction du journal arménien  
**ARCHALOUICE**  
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

**ԼՐԱԳԻՐ**

**ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

**ԿԱՆԱՆՑ ԲԱԺԻՆԸ**

Կինը եւ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐՄԻՒԹԸ  
 (Շարունակ իմաստորդ թիւէն եւ չիւրջ)

Ստեղծելով կնոջ համար գերութեան ստորնացնող կեանքը, կոյր հպատակութեան և բռնի հնազանդութեան փճացնող վիճակը, և նկատելով զանկալայ իրը և շնչաւոր առարկայ մը սոսկ մարդոց հաճոյքին ու պէտքերուն համար ստեղծուած, անոր հոգւոյն մէջ մեռցուցին ինքնաճանաչութեան, իր անձի գիտակցութեան և արժանապատուութեան վնաս զգացումները. և կինը միշտ ենթամիայ դարձաւ ճշմարտութեան, սխալ ինքն ալ կամաց կամաց հաւատարմութիւնը կամ արարչութիւնը զինքը ըստրուկ է ստեղծեր, թէ՛ ինքը դատապարտուած է յաւիտեան ստրուկ ապրելու:

Հին անձանց ժամանակներէ ՚ի վեր, ուրիշներու կամքին ու քմահաճոյքներուն տեղի տալու վարժուած իր հոգւոյն մէջ չէ կրցեր բռնի դնել կրթութիւն այն սքանչելի ուժը, որ վսեմ նկարագրի մը խորը (fond) կը կազմէ և որոյ դէմ ամենէն անյաղթելի կարծուած արգելքները, և ամենէն ամուր ենթադրուած ուժերը ապակիի պէս կը փշրուին, այդ է աճա՛ իսկական պատճառը որ նա յողորդը, վարանտ, փոփոխամիտ կ'ըլլայ չատ անգամ զանազան խնդիրներու մէջ:

Ուրիշներու կարծիքները ու գաղափարները ընդունելու և իւրացնելու սովորած ինքը անկախ միտք, ազատ մտածումներ, և ինքնուրոյն գաղափարներ չէ ունեցեր մինչ ցարդ և այսպէս հանրային կարծիքը կաշկանդելով կինը իր մտածումներուն և զգացումներուն մէջ՝ անոր բարոյական կեանքի մակարդակը զգալի կերպով ցածցուց: Նա սովորեցաւ կեղծել և սքանչելապէս յաջողեցաւ: Եթէ կը սիրէր՝ այդ սէրը թաղեց իր հոգւոյն ու սրտին ամենէն խորունկ ծալքերուն տակ իրը և արատ մը բարոյականի դէմ, իրը և գաւաճանութիւն մը պատուոյ սկզբունքներուն դէմ, իրը և ընդունուած սրբապաշտութիւն մը, ոճիր մը վերջապէս, և իր դէմքը սառէ գիմակ կը հագնուի մինչ զժողովը կը բռնկի՝ կուրծքին տակ...: «Ինչ պիտի ըսեն» ի մտածումը

կնոջ ամենէն մեծ սարսափն ու արհաւիրքը եղած է միշտ. նա կը սոսկայ հանրային կարծիքէն, ինչպէս մարդ կը սոսկայ կասաղանէն:

Երբեմն կը տեսնես աչքերը կը փայլին, սիրտը կը բաբախէ, բերանը կէս մը կը բացուի խօսելու, ազատ ասպարէզ տալու իր ներքին հոգեկան աշխարհին մէջ յուզուող ու եռացող զգացումներու բուռն հասանքին, և սակայն ինքզինքը կը զսպէ. հոն է հանրութիւնը, որ լարուած ուշադրութեամբ մէկիկ մէկիկ կը կռէ, կը վերլուծէ իր իւրաքանչիւր խօսքը, աչքերը չորս բացած կը քննէ իր ամէն մէկ արարքը, ամէն մէկ շարժումը, դէմքին խաղերն իսկ կը զննէ, կուզէ թափանցել անոր մտածումներուն մինչև խորքը, և շատ անգամ ինչ որ չ'տեսնիր՝ կը կարծէ գուշակել և այդ առանց կարմրելու իրը և ճշմարտութիւն հրապարակ կը հանէ:

Անպատկառ հետաքրքրութեամբ կուզէ կամաւելի ճիշդը կը տեսնայ անոր հոգւոյն ու սրտին ամենէն գաղտուկ խորշերն ալ քրքրել ու զննել և վա՛յ այն կնոջ որ անխոհեմ քայլ մը առնելով կ'անսկածանքի տեղի կուտայ. նա դատապարտուած է արդէն անողորմ ու սարսափելի վճռով:

Հանրութեան կարծիքը ճամկէտի սուրն է, որ սպառնալից կախուած է միշտ իր գը՛լ խուն վերէ: Սակայն պիտի ծագի ցանկալի օրը՝ յորում կինը վերջապէս առողջ և հիմնական դաստիարակութեամբ լուսաւորուած ու զօրացած, պիտի կոտորէ այն անտանելի շղթաները՝ որով նախապաշարեալ հանրութիւն մը կը կաշկանդէ իր ամեն նուիրական ու Սուրբ իրաւունքները. այն ատեն ցոյց պիտի տայ իր մտքի, սրտի, հոգւոյ բոլոր թագուն գանձերը...:

Փլամմարիոն կ'ըսէ թէ մեր երկրին դրացի «Մարս» մարտակին մէջ ապրող մարդկութիւնը, ամեն բանի մէջ նախապատուութիւնը տուած է կնոջ. թէ հոն՝ կինը շատ աւելի գերազանց կը նկատուի այ՞ մարդէն ամեն տեսակէտներով: Ի հարկէ չ'գիտենք թէ ո՛ր աստիճան ստոյգ է այդ ենթադրութիւնը, միայն թէ մեզ համար ուրախալի է որ Ֆլամմարիոնի պէս մարդ մը արդէն համողում գոյաշույցեր է կնոջ կողման բարձրութեանը վրայ, ճանչցելու ու գնահատելու է անոր արժանիքները, և «Մարս» երկնա-

կայական մարդկութեան մէջ տուել է անոր այն տեղը՝ զոր չ'ունի հոս՝ երկրի վրայ...:

Սակայն «Մարս» մեր երկրէն շատ աւելի ծեր, փորձառու, զարգացած ու նրբաբացած կ'ենթադրուի. Ի՞նչ պիտէ, երբ մեր երկիրն ալ հասնի անոր տարիքին, ի՞նչ ճակատագիր կը վիճակուի մեզ կանանցս համար. բայց այդ ասպարէս որքան յանկուցիչ այնքան ալ հեռաւոր է դժբաղդաբար. ատիկայ՝ մեզի յաջորդող բաղդաւոր սերունդներուն վերապահուած է: Մենք ջանա՛ք ցորչափ կ'ապրինք, մեր ներկայ այս անտանելի դրութիւնը բարւոյցելու, որը շատ դժուար ալ չէ:

Լսե՛ք միայն մեր խղճի ձայնին, նոյն իսկ եթէ աշխարհ մը բամբասանք ու մեղադրանք թափեն մեր վրայ. արհամարհե՛ք չարամիտ պարսաւանքները՝ որ մեր ականջները կը վիրաւորեն. խիղճը միշտ ձշմարիտը, Գեղեցիկը, Բարին կը թեքուրէ մարդուս: Բարոյականի որոշ ու ճշմարիտ օրէնքները, սկզբունքները ծանօթ են մեզի. ատենք նուիրական են ու սուրբ պէտք է մնան յաւէ՛տ մեզի համար: Բարձրացնե՛ք մեր սեռը այն ստոր վիճակէն՝ որոյ ենթարկուած է դարերէ ՚ի վեր. հզօր զարկ մը տալով մասնաւորապէս մեր սեռի դատարակութեան, որ դժբաղդաբար շատ թերի է, և աւելի երեւութական քան իրական ընտելում մը ունի: Ճանչնա՛ք մեր արժանապատուութիւնը, քա՛ջ ըմբռնե՛ք մեր բարձր կոչման գիտակցութիւնը, գործե՛ք առողջ և ամուր համոզումներէ առաջնորդուած միայն. և մոռնա՛ք հանրութեան կարծիքը:

Աղեքսանդրիա ՄԱՌԻ

**ԱՆՅՐԱԺԵՅՑ ՊԵՏԲԸ**

«Արշալոյսի» ի 28 ըր թուոյն մէջ յարգելի Տր. Յակոբեանի Ընկերական Պարսկահանութիւններ վերնագրին տակ գրած յօդուածին մէջ ըսուած էր թէ «մարդս ընկերական ծնած է»: այն, բայց ընկերական յարաբերութիւնները եթէ ազնիւ եւ օրինաւոր հիմքեր վրայ դրուած չըլլան, փոխանակ օգտակար ըլլալու չնաստակար կը լինին: Մեր հայոցս ամեն դասակարգի ընկերականութեանց մէջ պատահած շատ մը անկարգութեանց պատճառը քաղաքավարութեան պակասին պէտք է վերագրել. քիչ մը պարզենք: Բառագէտք քաղաքավարութիւն բառը կորոշեն անոր միացնե-

լով կենցաղագիտութիւնն եւ վայելչասիրութիւնն բառերը Բաղաբարութիւնը ամեն ընկերական յարաբերութեանց զարգ կուտայ. նա ընկերութեան համար այն է, ինչ որ է աղը կերակուրին համար. ուրիշն ամեն մարդու համար անհրաժեշտ պէտք է քաղաքավար եւ վայելուչ ըլլալ. առանց մեծամեծ ջանքերու կրնանք կենցաղագէտ ըլլալ. բաւական է որ ըմբռնենք այդ գիտութեան հիմնական սկուզբունքները, որոնք են պարզութիւն, բարեկեցութիւն եւ շնորհք. բայց պայմանաւ որ մեր ամեն շարժմանց մէջ չափազանցեալ չըլլանք.

« En tout l'excès est un défaut » կ'ըսէ առածը: Անշուշտ կը գտնուին մեր մէջ այնպիսի անձինք, որոնք ընկերական ազնիւ շրջանակներու հետ յարաբերութիւն ունենալով, կրցած են քիչ շատ ուսումնասիրել կենցաղագիտութեան կանոններուն գործնական կերպերը. բայց անոնք իսկ ինքզինքնին ամենագէտ կարծելով պէտք չէ դարձեալ անտարբեր գտնուին այսպիսի փափուկ գիտութեան մը կանոններուն մանրամասնութեանց հետեւելու. այն ատեն այդպիսիները կը նմանին մեծ եւ ազնիւ անձանց ա'յն տիւմար ժառանգորդներուն, որոնց անձնական արժանիքը չի համապատասխաներ իրենց կրած անունին:

Ըսի թէ, մեր մէջ պատահած շատ մը անկարգութեանց պատճառը քաղաքավարութեան պակասին պէտք է վերագրել. ասիկայ ասպացոյցով ստուգելու համար պարզ կամ ընտանեկան ընկերակցութեանց շրջանակներէն օրինակներ չեմ ուզեր յատուցել. վերջերս պատահած եւ ամեն զգայուն մարդու զգուանք ազդող եւ զրթբաղդաբար մեր ժողովականներու կողմէ ի գործ դրուած խիստ եւ աններելի միապետական գրուած թիւնները եթէ քննենք (1) լաւ ասպացոյց մ'է հաստատելու համար թէ մեր քիչ շատ կրթուած ազգային պաշտօնեաներն իսկ կենցաղագիտութեան տեղեակ չեն: Muller ի կենցաղագիտութեան վրայ գրած գրքին (2) մէջ պաշտօնեաներու մասին խօսած ասան կըսէ թէ. « ամեն պաշտօնեայ ինչ որ ալ ըլլայ իր աստիճանը պէտք է միշտ յիշէ՝ թէ ինքը ժողովրդին ծառան է. պէտք է սպասէ որ զինքը յարգեն, պայմանաւ որ ինքը օրինակ ըլլայ անոնց. ամենակոշտ մէկը միմիայն կրնայ անքաղաքավարութեամբ անվայելը ի գործ գնել. մէկու մը կամ շատերու դէմ, որոնք զինքը ընտրող ժողովրդին կը պատկանին եւ թէ օրինաւոր կերպով զիմած են իրեն: »

Ես իբր ժողովրդի զաւակ, մեր ազգային գաւառական ժողովոյ անդամներուն համար այս տիւրը խոստովանութիւնը ըրած ատենս, չի մոռնամ հանրագրին ստորագրութիւնները ժողովին ներկայացնողներէն խնդրել, որ բարեհաճին կարելի եղածին չափ մարդ, այսինքն խելացի ընկերական մը ըլլալու աշխատել:

Հիմա մենք հայերս, որ արտաքին թշնամիէն շատ եւ շատ մեծաւոր ենք, այդ մեծանքը դարձանելու համար շատ գոհողութեանց պէտք ունինք. ուրիշն աշխատինք ներքին պակասնիս դարձանելու. ուժ տալով լրագրութեան — անձնական կրթներով զանոնք լեցնենք ըսել չեմ ուզեր այլ ընդհանուրին օգտին ծառայեցնենք — կարելի եղածին չափ ազնուացնենք մեր շարժումները եւ մեր թշնամիներու հետ իսկ փափկանկատ ըլլանք. վերջապէս չի գոհենք ընդհանուր մեր անձնականին: Ես « Արշալոյս » ի էջերուն ներածին չափ թարգմանութեամբ կը խոստանամ գրել կենցաղագիտութեան մեզ համար ամենակարեւոր կանոնները:

Գ. ՉԱՎՈՒՇԵԱՆ

ԿԱՐՂ ԽՍՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ

Տեսարանն է Պէնի Սուրէնի փողոցը տուն մը. առաւօտեան ժամը 7ն է, եւ նախաձայն արդէն աւարտած՝ մայրը կիմացնէ զաւակին որպէս զի փութայ վարժարան երթալ, ու չի մնալու հա-

(1) « Չը յիշուի » ի խնդրը պէտք է հասկընանք, որ Գահիրէի սմբողը հայ գաղութին եւ իր ժողովականներուն մէջ տեղի ունեցաւ:  
(2) La politesse française.

մար. այս վերջինը կը դժկամակի երթալ, պատճառը . . . :

ՄԱՅՐԸ. — Չաւակ, ինչո՞ւ այսքան դժկամակութիւն ցոյց կուտաս վարժարան երթալու համար, այս տեսակ բան մը ըրած չես:

ՏՂԱՆ. — (յուզեալ) մա՛յր ես վարժարան չեմ երթար . . . :

Մ. — Բայց ինչո՞ւ դաւակա:

Տ. — Օրը մինչեւ երեկոյ նստած ենք . . . :

Մ. — Բայց չեմ հասկնար, ի՞նչ ըսել կուզես: Միթէ դաստուռ չկա՞յ:

Տ. — Դաստուռ չա՛տ . . . բայց ի՞նչ օգուտ, գիրք չունինք:

Մ. — Ուզէ տղա՛ս, ինչ որ պէտք ունիս . . . :

Տ. — Չեն տար, մայրի՛կ, ՊէՅԸ պատուիրեր է որպէսզի մինչեւ որ ստակ չի տանինք, ո՛չ գիրք ո՛չ թուղթ եւ ո՛չ ալ տետրակ պիտի տան եղբր:

Մ. — Տղաս անոնք գիտեն որ մենք աղքատ ենք. եթէ ուզես կուտան . . . :

Տ. — Օ՛ք մայրի՛կ, չե՛ս հասկնար կոր, ՊէՅԸ ըսեր է որ չի տան . . . :

Մ. — Չէ նէ տղաս, քեզի ուրիշ դպրոց մը զրկենք (1):

Տ. — Բայց եթէ ուրիշ դպրոց երթամ բոլորովին եկեղեցիէն պիտի զրկուիմ. տե՛ս, հայ տղաքները, որոնք օտար վարժարաններ կ'երթան, բայց եկեղեցի չեն կրնար գալ . . . :

Մ. — Ինչո՞ւ տղա՛ս, եթէ ոչ գէն կիրակի օրերը ազատ են:

Տ. — Կիրակի օրերը ազա՛տ մի, ատ Ծրեհները գիտե՛ս որ ինչ վարպետորդի մարդիկ են. կիրակի օրերը մինչեւ կէս օր դպրոցը կ'ըծական եւ չեմ գիտեր ինչ դասերու համար տղաքները վար կը գնեն:

Մ. — Է՛, ի՛նչ ընենք ուրիշ, տղա՛ս . . . :

Տ. — Վանը Կարապետին բողոքելու է, թէ կտակը գործադրել չուզուի ազգ. ժողովոց կողմէ: Թէ Կտակը լքուած է (2):

99 Նոյ. 18 Գաաիրէ Կ. Գ.

Ա. Չ Գ Ա. Յ Ի Ն

Երկուշաբթի օրը ժամը տասին երկու. քահանայք յանուն Եգիպտոսէ՝ Հայ գաղութականութեան Բարձր. Խորհրդին ներկայացան՝ բարի գալուստ մաղթելու համար:

ՄԱՄՈՒՐԵԱՆԻ ԹՈՐԵԼԵԱՆԸ ԵՒ ԳԱՀԻՐԷ. — Արեւելի մէջ կը կարգանք:

Վերջին պահուն կը տեղեկանանք Գահիրէի մեր թղթակցին հոկտ. 12/24 ամսաթիւ մէկ նամակէն, թէ Մամուրեանի Թորելեանին աւթիւ Եգիպտոսի հայ գաղթականութեան մէջ ձեռնարկուած հանգանակութեան գումարը հասեր է 900 ֆրանքի, հանգանակութիւնը կը շարունակուի եւ անոր նախաձեռնութիւնը ստանձնող գրասէր ազգայինները կը փափաքին եղբր 150 նաբուլէնի հասցնել, Արեւելեան Մարտիկոյ յատուկ տպագրական նոր մամուլի մը գնման յատկացնելու գովելի նպատակով:

« ԲԻՒՐԱԿՆ » ՇԱՐԱԹԱԹԵՐԹԷՆ.  
Մասնակցորդեան առաջարկ մը. — Անոնք որ միջոց եւ գիւրութիւն չունեցան մասնակցելու Մամուրեանի յորելեանին,

(1) Ուրիշ Դպրոցի մէջ ձրի գիրք կուտան:  
(2) Արդարեւ համաձայն չենք որ կտակը անգործադրելի ըլլայ, սակայն պարտ անձին կը համարինք նաեւ. ծանուցանել հայոց վարժարանը յաճախող բոլոր աշակերտաց ծնողներուն ալ, որ քիչ մը հոգ տանին վարժարանի կողմէ իրենց զաւակաց տրուած գրքերուն, որպէսզի բերուած գրքերը երեք օրէն չ'սպառին եւ աշակերտներն ալ չը զրկուին գիրք ունենալէ:

կրնան տակաւին, իրենց սրտին գոհացում տալու համար, նոր ձեւով մը յայտնել իրենց մեծարանքը, եւ այս նոր ձեւը կրկնակի օգտակարութիւն կ'ընծայէ: Մամուրեան ունի 40ի չափ հեղինակութիւն եւ թարգմանութիւն, որոնք կ'արժէ որ գտնուին ամէն Հայու մատենադարանին մէջ (վանդի կ'ենթադրենք թէ ամեն մարդ մատենադարանի պէս բան մը ունենալու փափաքող է):

Արդ՝ համեստ գումարով մը կարելի է այդ գրքերը գնել իբր յիշատակ Մամուրեանի յորելեանին: Իսկ ունեւորներու համար կ'առաջարկենք գնել այդ գրքերն ամբողջովին եւ նուիրել գաւառային դպրոցներու եւ որբանոցներու գրադարաններուն: Ահա գործնական միջոց մը մէկ կողմէ համակրանքի գրաւական մը ընծայելու համար մեծանուն յորելեանին եւ միւս կողմէ օգտակար նուէր մը ընելու համար կարող կրթարաններուն:

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԾԵԱՆԻ 25 ԱՄԵԱԿԸ.—Մասնակցի մէջ Հոկտ. 4/16ին տօնուեցաւ Պ.Գրիգոր Զանչեանի գրական գործնեութեան քսանեւհինգամեայ յորելեանը: Գ. Զանչեան թէ է ծնունդով եւ հոգիով Հայ էր, բայց իր կեանքի պայմանները զինք ձգած էին Ռուս գրականութեան մէջ. Վերջին հայկական սարսափներու ժամանակ, Զանչեան Ռուս թերթերու միջոցաւ բացատրեց հայոց կրած թշուառութիւններն եւ «Հայերու դրութիւնը ի Թուրքիա» անունով գիրք մը, ինչպէս նաեւ «Եղբայրական օգնութիւն» անունով ժողովածու մը պատրաստեց, որուն զուտ արդիւնքով — 33175 ռուբլի, — եօթն որբանոցներ հաստատուած են այժմ Հայաստանի մէջ եւ մօտ աստեղէն ճրգն ալ պիտի հաստատուի:

Ահաւասիկ ազնիւ Հայ մը, որոյ նախաձեռնութեամբ եւ ջանքերով բազմաթիւ սովախներ նիւթական օժանդակութիւն կը գտնեն:

ՄԱՀ ՆԱԽԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ.—Նախկին Պատրիարք Աշրգեան Տ, Խորէն Արքեպիսկոպոս, Հոկ. 26/7 Նոյեմբերին վախճաններ է 37 տարեկան հասակին մէջ, ստամոքսի քաղցկեղէ:

Տ. Խորէն Աշրգեան Նիկոմիդիացի էր, Գէրգէմէթ գիւղէն, ինը տարեկան հասակին մէջ Արմաշի վանքը մտած, 1863ին վարդապետ ձեռնադրուած եւ 1873ին ալ եպիսկոպոս եղած էր:

Խորէն Աշրգեան, 1888 Սեպտ. 29/11 Հոկտեմբերին Արմաշի վանքէն Կ. Պոլիս բերուեցաւ, Պատրիարքական աթոռը բազմելու համար:

Հանգուցեալ Աշրգեան միայն վանական կեանքի վարժուած ըլլալով, Պատրիարքական աթոռին վրայ չ'կրցաւ օգտակար դառնալ, հետեւաբար Հայ ժողովրդեան միահամուռ պահանջումին վրայ տեղի տալով հրաժարեցաւ եւ Մաքրիգիւղի մէջ չէզոքացած կեանք մը կը վարէր:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒ, Գործակալութիւն. — Ստացած ենք Ձեր 9 Նոյեմբ թուակիրն ներխակալ Մանտաֆօսթով: Գ. Ս., Լ. Պ., ՄԵԼ., Յ. Գ. — Ձեր տարեկան բաժանորդագրիւններն ստացուած են:

»

ձեռնարկ, Յ. Թ. — Ձեր պատասխանը ուշացաւ :  
 ՀԱՒԱՄՏԻՆ, Ա. Օ. — Ձեր նամակը եւ Մանուֆոսթը ստացուած է :  
 ՊէլձիԳԱ. — ՊՐՈՒԲՍԷԼ, Մ. Թ. — Ձեր նամակը ստացուած է :  
 ԹՈՒԼՁԱ, Ք. Վ. — Հրաշալի ջուր վաճառողը Գարթֆօսթայով ծանուցած է Ձեզ յապաղման պատճառները, որ կարծեսք փոսթատան չ'ընդունին է :

### ՀԱՆԴԵՍ ՆՃԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Ուրախ ենք « Արշալոյս » ի ընթերցողներուն հաղորդելու թէ՛ թերթիս բարեկամ և աշխատակիցներէն Տիար Ա. Նազչճեանի (Ա.Վօ) նշանախօսութեան հանդէսը կատարուած է անցեալ կիրակի գիշեր Նոյեմ. 19ին, « Արշալոյս » ի յայտնի աշխատակից Օրիորդ Մառի ՊէլձիԳիանի (ՄԱՌԻ) հետ :

ՊէլձիԳիան գերգաստանի բնակարանը բազմաթիւ բարեկամներու ներկայութիւնը վայելած է այս գեղեցիկ առթիւ : Մեք եւս, մեր բարեկամին ու բարեկամուհոյն ձեռքերը ջերմապէս սեղմելով, իրենց այս ներդաշնակ կապակցութիւնը կը շնորհաւորենք և բոս ամենայնի յարատեւ երջանկութիւն կը մաղթենք :

### ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 18ին շաբաթ օր կէս օրէ ետք, Բարձր. Խտիվը քաղաքս ժամանեց :  
 Նորին Բարձրութիւնը երկուշաբթի օրը, քաղաքիս բոլոր ազգերու ներկայացուցիչները ընդունեց, որոնք բարի գալուստ մաղթեցին Նորին Բարձրութեան :

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՅՎԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Գաղիոյ 1900 ի ցուցահանդէսին բժշկութեան միջազգային 13րդ համաժողովը տեղի պիտի ունենայ Բարիդի մէջ յառա. ջիկայ օգոստոս ամսոյ 2—9ը :

Եգիպտական մասնախումբին անդամներն են : Տր. Հասան փաշա Մահմուտ՝ նախագահ. Տր. Ա. Էյա՝ քարտուղար, և Տր. Ապաթ փաշա, Պէյքըր պէյ, Գոմանօս փաշա, Տր. Փուքէ, Իպրահիմ փաշա Հասան, Տր. Միլթըն, Տր. Նաքամուլի, Թուրթելիս պէյ, Տր. Վօրօնօֆ :

Սոյն համաժողովին մասնակցիլ փափաքող գիտուններէն և բժիշկներէն կը խնդրուի որ բարեհաճին իրենց յօժարութիւնը հաղորդել Տր. Հասան փաշա Մահմուտի և կամ Տր. Էյաի՝ միևնոյն ատեն հանգանակութեան օրոյ՛ ալ բաժնագիրը և զոր 23 Ֆրանքը վճարելով Գրէտի Լիօնէի գրամատան Գահիրէի մասնաճիւղին, ուրկէ պիտի ընդունին յատուկ ստացուցիչը :

Անդամները իրաւունք պիտի ունենան համաժողովին աշխատութեանց մասին համարատուութեան տպեալ օրինակներէն մէկ

մէկ հատ ստանալու, ինչպէս նաև ցուցահանդէսին երթևեկի և բնակութեան գներուն վրայ զեղջեր ընելու իրաւունքը և այլ առաւելութիւններ ալ պիտի վայելեն :

Այն անդամները որ կը փափաքին բան մը հաղորդել համաժողովին, պարտին այդ մասին կանխաւ տեղեկութիւն տալ Տր. Հասան փաշա Մահմուտին և կամ Տր. Էյաիին 1900 ապրիլ մէկէն առաջ :

Աւելի կատարեալ տեղեկութեանց համար ինչպէս նաև նախաշաւիղ ծրագիրը ստանալու համար դիմել՝ առ Տր. Հասան փաշա Մահմուտի և կամ Տր. Էյաի, ամեն օր ժամը 3էն մինչև 5 յետ միջօրէի :

### ԻՆՎԱԾ ՄԱՐԴԸ

Գիշեր էր, անդադար պլպլումներով վառող կազերու ակնապարար լոյսերով : Պայծառ երկինք մը կար, ուր տեղ տեղ ձերմակ ու կապոյտ ամպեր իրարու խառնուած շղարշածու մակերեսոյթ մը կը ձևացնէին : Աստղերը շատ քիչ էին. իսկ լուսինը Թագուհոյ մը յամբ քայլերով միայնակ կը յառաջանար, անտարրեր իր ետեւէն սրացող ափ մը ամպերուն իր փայլուն գէմքը ծածկելու չարամիտ դիտաւորութենէն :

Երկիրը գեռ արթուն էր և ցերեկի մշտնջենական ոգեւորութիւնը հարեւանցի փոփոխութիւններով մեղմացած էր. բնութիւնը իր վաղքը կը շարունակէր, և հասած էր արգէն երեկոյէն անդին մինչև կէս գիշերին մօտ :

Ու դեռ ինքը — ինկած մարդը — կը քամէր, կուշտ կը քամէր իւր սիրած ալօլի բաժակը մինչև ծածկ . . . :

Բարեկիրթ ճաշակի ու խնամքի ինքնածին նախանձը հոն զետեղած էր ամէն վայելչութիւն, որին նայող աչքերուն կարելի չէր երանի չ'կարգալ այնտեղ մտնող արժանաւորներուն համար : Երեւոյթի մէջ դա՛ պարտիզակ մ'էր, սակայն իրականութեան մէջ գեղեցիկ դրամատ մը. որուն մէկ անկիւնը նստած ինքը — Մարդուկը — կը խմէր միշտ կը խմէր . . . :

Պարտէզին մէջ փռուած դեղնապտիս աւազէն կը յայտնուէր առաջնորդող օձապտոյտ ճանապարհը, որ բլուրի մը կողմն յանգելու երեւոյթը կուտար և որուն մէջ այն ժամուն տիրող լոռի թիւնը ոչ մի բանով չէր խանգարուէր. եթէ ոչ գոմտող ծառերու տերեւներուն երբեմն մեղմ, երբեմն ամուր շուրջներովը, որոնք հետզհետեւ աւելի կը շփանային տիրող թիւնի քամիին երեխայական զրգուններէն քաջալերուած :

Սակայն ինքը, անհոգ ու անուշադիր, կը քամէր, կը քամէր իր գաւաթին մինչև վերջին կաթիլը . . . :

Վարդերու, ծաղիկներու և գոյնզգոյն բուսական անուշահոտ արտադրութեանց մրցումի ասպարէզը բաց էր կարծես և որոնց գեղեցիկ տեսքը՝ աննշմարելի չէր լսութարներու ուղողուն լոյսին տակ և մինչև իսկ արձանագործի ամենանուրբ գրչին հրաշալիքը եղող աւազանը, որուն մէջտեղը շուրջն վեր կենդանի երեւոյթով կանգնած էր հուրբի մը մարմարեայ արձանը, ափին մէջ ընձած թեւատարած աղանի մը. ի նշան անմեղութեան և անհայտ աղանի սպիտակ ուսած կուրծքին արուեստական բացուածքներէն դուրս կը խուժէր ջուրը օդին մէջ, մարգարտանման մանր հատիկներով վար աւազանին մէջ թափուելու համար, այն աւազանին՝ որուն մինչև չեւ շրթունքը լեցած խաղաղ երեւոյթը վրդովուած էր իր մէջ արշաւող ջուրի կայլակներուն զրկախառն ուսումնակներէն :

Իրական ճշգրիտ այս պատկերները ոչ մի բանով չէին հետաքրքրէր զինքը — մարդուկը — ու ինք գարձիակ կը խմէր, կը խմէր իր սիրած ըմպելիքին մինչև յետին մրուրը . . . :

Բայց ալ իր երեւոյթը փոխուած էր, աչքերուն կաթասացած տեսքը, ու անոնց բերբերուն

ստացած կարմրութիւնը կը նշանակէր իր պարտութիւնը, իր քայքայիլ խոնրէ պարտիլը, որոնք մերթ վիշտ, մերթ քաղցրութիւն, երբեմն ձանձրոյթ և երբեմն կակիծ յայտնող երեւոյթներով կը մատնէին զինքը այժմ թէ՛ իր սրտին մէջ փոթորկի մը գաղտնալից գոյութիւնը կերեւայ, որոյ անլուծելի կլքին համար երբեմն երկու ձեռքերուն մէջ կանոնէր գլուխը՝ աւելի եւս փութացնելու համար իր սպասած լուծուած, որ իր ըզըղը կը շարժարէր :

Ալ ներգաշնակութիւն մնացած չէր, զինքը ընկճող խորհուրդները իր մարէ՛ն ստուերի պէս կը փախչէին, որոնցմէ ստացած շիթութիւն մէջ երբեմն զայրոյթով կը նայէր կուլ տուած ալբօլի քանակին իրեն գէմ՝ այնքան մեղմ գոմտուելուն համար :

Ու կը խմէր, լեւի լեցուն կը խմէր . . . :

Ահա հետունը ոգեւոր և ոստոսաուն խմբակի մը ղուարթ երեկոյթը կայ, որուն բաց պատշգամէն փախած նուագարանի և երգերու մոգիչ ու յափշտակիչ ձայները կը ցրտին, կը տարածուին օդին մէջ ու մինչև իրեն կը հասնին. սակայն ինքը ընկղմած ալօլի՛ գոնէ իրեն համար սրբազան շնորհացը երկրպագութեան մէջ, կը խմէր՝ միշտ կը խմէր . . . :

Եւ եթէ խաղաղ երկնքի տակ աւանձնութեան մէջ իրենց օրերուն սեւ բոպէները ողբացող թըշուաւներուն արտասուքի հեղեղն իսկ մինչև իրեն հասնէր, դարձեալ հոգը չէր. ի սպաս անտարրեր է նա իր շուրջը տիրող կեանքի հակընդդէմ երեւոյթին. կը խմէր . . . :

Բայց գիշերապահի խոպոտ ձայն մը, դուրսէն շանթալից աղմուկի մը սկզբնաւորութեան նշանը կուտայ, և ինքը յանկարծ կ'սթափի և իր շիթթ ու ցրուեալ խորհուրդները ամբողջ ջանքով կրկին կը լեցնէ ալօլի զլլիւիչ գաւաթը ու արտասուքի հեղեղով մը կը գոչէ այլ յայտնէ կղած . . .

«Փրկութիւն, օգնութիւն, ահա ինկած կորսուած եմ, իրարու յաջորդող մտածումներս կը քշեն կը տանին զիս դէպ անդունդ և ես իսպառ պէտք է կորսուիմ անոր անյատակ խորութեանը մէջ : Գիտե՞մք զիս, բարձր ու սուրբ նպատակակէտս վերջապէս կը ձգէ զիս յորձանքի մը փրփրադէզ կոնակներուն մէջ, որոյ խլացուցիչ դուռ ու գոյնի մէջ ձայնի՛րս, աղաղակներս տեղ չեն հասնիր և անցորդի մը գոթին ու կարեկցութիւնը չ'շարժիր յիս :

«Ինկած կը համարուիմ ճանապարհ կարծիքին առջև գինովութեան անբաւելի մեղքերովը ծանրաբեռնուած . . . յանցաւոր եմ :

«Ահա՛ լեցուն է գաւաթիս, ինչպէս լեցուած է սիրտս. այս լեցուն գաւաթիսին ալ իսկապէս անգոր կը մնան գոհացնելու զիս ու իմ հոգեկան տենջիւքս. ու եթէ մարդկային անգթութեան ծայրայեղ դրկումները շարունակեն այսպէս, արդեօք ինչ պիտի ըլլայ իմ վիճակս, ու ինչ մնացեալ պատիւս :

«Ահաւասիկ կը պատրաստուիմ մեկնելու ու թերեւս պիտի ինձամ լայն պողոտային վրայ, որովհետեւ մութի մէջ պիտի հեռուիմ քայլամուտքը քաղցրութեան, թաւալալոր պիտի ինձամ գետին և իսաւարի մէջ անարգ մտացութեան զաղիք ու զարշիլի նախատինքը պիտի կրեմ : Մարդիկ պիտի անցնին քովէս պիտի ծիծաղին վրաս, պիտի մեղադրեն ու մինչև իսկ անպատկառ երեւոյթներու բիւրսզան մեկնութիւններով պիտի խօսին, որոնց ամէնն ալ իմ ականջներովս պիտի լսեմ :

«Բայց արդեօք ո՞վ է մեղաւորը, ե՞ս թէ՛ ա՛յն որ այս ամենուն շարժառիթն է կղած :

«Ո՛յո՛, ես եմ բարեոյն անաշտ պատիժին ու տանջանացը արժանին : Ե՛ս եմ յանցաւորը . . . :

«Ո՛ւր է քու արանս, ո՛ւր օթեւանս . . . :

«Մի՛, մի՛ խանդարէք զիս. թողէք զիս յաւիտեան իմ քաւարանիս մէջ, իմ հոգւոյս ու մաքիս յիշատակարանին մէջ, անոնք հաճելի են, քաղցր են, նուիրական են ինձ համար . . . :

«Այսպէս պէտք է որ մարի իմ լուսոյս ու ջերմութեան շատուելիները և եթէ անշուք անցնիմ այս աշխարհէն, բաւ է որ եւ վարդի փիջակ մը գոնէ իմ ցուրտ գերեզմանիս վրայ :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ 19 ՆՈՅԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ. 4014	շահած է Յրանք	1000
Բ. " 8834	"	200
Գ. " 8334	"	100
Դ. " 5853	"	50
Ե. " 5312	"	50

Հետևեալը 23 ական ֆրանք կը շահին

8153	796	6128	7870	450	8989
5978	3550	2976	5913	3210	370
7626	6465	3379	7934	2975	5384
	6505	4961	8660	9072	

ԾԱՆՈԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Ընկերութեան անուակին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՈՐ ԴԱՍԵՐ

ՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ՀԱՍԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՏԱՂՈՒՏԻՅԵ

Առաջիկայ նոյեմբեր ամսոյ 6էն սկսեալ երեկոյները ժամը 7էն մինչև 9 1/2 պիտի աւանդուին Անգղ. Գաղղ. Արարերէն և Հայերէն դասեր:

Դիմել առ Մ. Յ. Գնձնին Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱԶԵԱՆ ՓՈՒՌ

Օղբօր Պափ վանաւասան մօտերը, Կամե-էլ-Պեհաբի ճիւղ ղիմացը

ԵԿԱԻՅԵ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փուռին մէջ, անխորհրդաւ աւելի կը պատրաստուի ԳԱՂՂԻՍԿԱՆ, ԱՆԳՂԻՍԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի եւ կաթի պարօքիմաթներ, եւ այլն: Եկաւօֆ եւ Ընկերութիւն մեծ ջանք եւ հոգածութիւն պիտի ունենան իրենց ղիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու: Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ եւ փութով կը կատարուին: 17-50

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ

Քկայեալ սեղական կառավարութեան եւ բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է ի Շարա Ապա-իւ-Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին ղիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը եւ տեղական կլիմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն ղիմողները կատարելապէս դո՛ւ պիտի մնան: 20-24

ԼԵՒՈՆ ԿԻՍԻՒՆԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

ՃՕՆՕԿՐԱԾ

ԳԱՂՂԻՍԿԱՆ. — Մուսի փողոց, — ԳԱՂՂԻՍԿԱՆ Ս. ԵՒ Ս. ԱՔՏՈՎԻԻ վանաւասան ղիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քօնօթի ընտիր տեսակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ ԵՒ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկի, արծաթ եւ ցիւրի:

Ճրանասական եւ ամերիկեան ապրանք ամենաընտիր տեսակներէն զարգեղէններ, շղթաներ, օղեր, մասանիներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

33-50

ՏՕՐԹՕՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ Ապսին, Շարի Գուպրի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծակռաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակռայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ ինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակռաներուն տողունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երայխաւորէ: 4 2-10

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ Տալիբի Սանիյի ճիւղ ղիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ իրատ կօկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար:

Գիները չափաւոր եւ աժան: Փորձ մը միայն կը բաւէ: 24-24

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՋԱՌԱՏՈՒՆ

Ի ԳԱՂՂԻՍԿԱՆ

ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԳԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7էն մինչև երեկոյեան ժամը 8ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ, ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Ցանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Բնկերութեանց եւ վաճառականներու տպագրական աւելի պիտի ստացնեն:

Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եզրիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԳԱՐԲԻՆԵԱՆ

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ԳԻՐԻՔԻ ԱՐՉԵՍՏԱԻՈՐՆԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԸ

ՇԱՐԱ ՄՈՐԱՅԱՄՄԷՏ ԱԼԻ

ԳԱՂՂԻՍԿԱՆ

Ամեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւի կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն ղիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և շն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ:

3-8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՔ-ԷԼ-ԱՍՄՈՒ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բաստրոյ) սեւ, շագանակագոյն և ոսկեգոյն:

Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երայխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադրեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարեան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք տեսնուած է: Շիշը 10 զրշող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ ջուրէն կը գտնուի նաև Աղէք-սանդրիա Սիքքէ-Կէտիտ մանրալաճառ Պ. Լեոն Ասլանեանի մօտ:

Ակռայի փոշի և ջուր մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակադրոյցները: 3 3-8